«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ	Թեստերի տեսակները և դրանց կառուցման սկզբունքները
ԱՌԱՐԿԱ	Անգլերեն
ՀԵՂԻՆԱԿ	Ավետիսյան Թամարա
ՄԱՐԶ	Արագածոտն
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ	Հարթավանի միջնակարգ դպրոց

Բովանդակություն

Ներածություն 3
Նպատակ 4
1.Թեստերի տեսակները և դրանց կառուցման սկզբունքները 5
2. Թեստերի տեսակները 8
Եզրակացություն 16
Գրականության ցանկ 17

Ներածություն

Գնահատումը տեղեկատվության հավաքումն է այն մասին, թե ուսումնառության ինչպիսի մակարդակի է հասել սովորողը: Այդ տեղեկությունը հավաքելու համար կարելի է օգտագործել գնահատման բազմաթիվ միջոցներ: Դրանք կարող են ներառել բազմաթիվ դիտարկումներ, գրավոր թեստեր, տնային աշխատանքներ, հետազոտական բնույթի աշխատանքներ,նախագծեր, բանավոր հարցումներ և այլն:

Դրանց մեջ իր ուրույն տեղն ունեն գրավոր թեստերը, որոնք գիտելիքների ստուգման ժամանակակից արդյունավետ եղանակներից են: Թեստեր կազմելիս մենք պետք է ունենանք հստակ նպատակ: Թեստը որոշակի նպատակով կազմված ուղղորդող ցուցումներով հարցերի շարք է, սովորողներին գնահատելու և նրանց ուսումնական գործունեությունը արժևորելու համար:

Թեստերի հիմնական նպատակներն են ընտրություն (սովորողների մի սահմանապակ քանակ ընտրելու նպատակով: Օրինակ օժտված երեխաների ընտրություն), աշակերտների առաջադիմության արձանագրում, հայըորոշում, արժևորում, հաշվետվություն:

Նպատակ

Իմ հետազոտական աշխատանքի նպատակն է ուսումնասիրել տարբեր տեսակի թեստեր և թեստային ձևաչափեր և ներկայացնել դրանց կիրառման ձևերը։ Թեստային աշխատանքները դպրոցական ծրագրում ներառված կարևորագույն գործոններից է։ Դրանք իրականացվում են ուսումնական տարվա սկզբում, ընթացքում և ավարտին։

Հիքսը (2000:155) կարծում է, որ թեստերի դերը շատ օգտակար է և կարևոր հատկապես լեզուների ուսուցման ընթացքում։ Թեստերը թե ուսուցիչների և աշակերտների համար մի միջոց է, որի միջոցով պարզ է դառնում ստացած գիտելիքների չափը (և ուսուցիչը)։

Ըստ Հիթունի թեստերը լավ միջոց են ուսուցչի համար, որպեսզի նա գիտակցի թե ինչի վրա պետք է ուշադրություն դարձնել։

Աշակերտների գիտելիքները ստուգելու համար ուսուցիչը կարող է կիրառել տեխնիկայի մեծ շրջանակ, նույնիսկ ինքնագնահատման տեխնիկան,որը շատ սիրված է աշակերտների կողմից։

1.Թեստերի տեսակները և դրանց կառուցման սկզբունքները

Թեստ կազմելիս պետք է հստակ գիտենալ, թե ու՞մ և ի՞նչը պետք է ստուգել և ի՞նչ նպատակի են ծառայելու ստուգման արդյունքները։

Ուսումնական գործընթացում թեստերի կիրառումը ունի մի շարք առավելություններ.

- Հնարավորություն է տալիս ուսուցչին փոքր մասերով ստուգել ուսումնակա նյութի յուրացումը
- Կարողանում է արագ գնահատել մեծ թվով սովորողների
- Նվազեցնում է սուբյեկտիբ գործոնը
- Հնարավորություն է տալիս պարզելու յուրաքանչյուր սովորողի դժվարությունները՝ շնորհիվ առաջադրանքի փուլային կատարման

Պարզելու սովորողի «ցավոտ կետը», վերացնելու նկատված թերությունները, նպաստելու սովորողի առաջընթացին։

Հարցը առաջադրանք կատարելու հանձնարարական է, որն ակնկալում է շակերտների պատասխանը։ Այն անհրաժեշտ է ձևակերպել պարզ և հստակ։

Հարցը պետք է ունենա միանշանակ պատասխան։

Տարրական դասարաններում թեստեր կազմելիս օգտագործվում են հիմնականում հարցերի հետևյալ տեսակները.

- Մեկ ճիշտ պատասխանի ընտրությամբ
- Համապատասխանեցմամբ
- Բաց թեղածը լրացնելու
- Կարճ պատասխան պահանջող
- Ընդարձակ պատասխան պահանջող
- Ստեղծագործական աշխատանք պահանջող։

Ներկայացնեմ տարրական դասարանների «անգլերեն» առարկայից աշակերտների գիտելիքների կարողությունների ստուգման թեստերից որոշ հարցերի նմուշ օրինակներ՝

1. I can't come to the phone – I have / I'm having a shower!
2. I watched/ I was watching TV when suddenly the telephone rang..
3. I had been waiting/ I had waited in the rain for ages when she finally turned up.
4. My mother works / is working in the garden now.
5. I clean / cleaned my room every Sunday.

Հաջողված թեստ ստեղծելու համար կան մի շարք գործոններ, որոնք անպայման օետք է հաշվի առնել: Դրանք են ՝թեստ կամելու հիմնական սկզբունքների իմացությունը և առաջադրանքների համակարգի ճիշտ ընտրությունը: Թեստ կազմելիս պետք է հաշվի առնել հետևյալ պահանջները.

- **Թեստը պետք է լինի հուսալի**: Հուսալիություն ասելով հասկանում ենք, որ թեստերի ստուգման արդյունքները անկախ հանգամանքներից պետք է հաստատուն լինի: Տարբեր պայմաններում, տարբեր ստուգողների կողմից նույին թեստի ստուգման և գնահատման արդյունքները, գնահատման նույին սկզբունքները հանդես բերելու դեպքում տարբերություն գրեթե չպետք է լինի:
- **Թեստը պետք է լինի հավաստի**: Հավաստիություն նշանակում է, որ թեստը պետք է ծառայի իր նպատակին, այսինքն պետք է ստուգի այն գիտելիքներն ու հմտությունները, որոնք նախատեսվախ էր ստուգել: Հավաստի թեստը ապահովվում է կոնկրետ նպատակին հասնելու հաջողություն:
- **Թեստերը պետք է լինեն արդյունավետ:** Արդյունավետ է համարվում այն թեստը, որը արդյունավետ է չափում սովորողի գիտելիքը, կարողություններն ու հմտություններն: Բովանդակության տեսակներից արդյունավետ է այն թեստը, որը ընդգրկում է ստուգվող թեմայի կամ թեմաների հիմնական կարևոր հարցերը: Թեստը

արդյունավետ է, եթե թեստի դժվարության աստիճանը համապատասխանում է սովորողի պատրաստվածության մակարդակին:

- **Թեստը պետք է գործնական կամ իրականանալի թե՝ տեխնիկական թե՝ ֆինանսական, թե՝ ժամանակի տեսակետից:**

Թեստեր կազմելիս շատ կարևոր է առաջադրանքների տիպերի ճիշտ ընտրությունը: Թեստում առաջադրանքները պետք է դասավորվեն պարզից դեպի բարդ սկզբունքով՝ ըստ Բենջամին Ս.Բլումի ճանաչողական վարքի աստիճանակարգի տաքսոնոմիայի:



- **Գիտելիքը,** սովորողը կարող է հիշել ուսուցման ընթացքում ստացած գիտելիքը կամ տեղեկատվությունը: Այն կարող է լինել կանոնների, դիագրամաների, փաստերի և այլի տեսքով:
- **Ընկալում-** սովորողը կարող է հասկանալ ստացած գիտելիքը կամ տեղեկատվությունը և մեկնաբանել սեփական բառերի, օրինակ բերելու միջոցով:

- **Կիրառում** – սովորողը կարող է կիրառել գիտելիքը, կամ տեղեկատվությունը օգտագործելով այն կոնկրետ գործողությունների մեջ։
- **Վերլուծություն**- սովորողը կարող է վերլուծել գիտելիքը կամ տեղեկատվությունը, տրոհել մասերի՝ գտնել նրանց միջև եղած կապը առանձնացնել կարևոր և ոչ կարևոր տեղեկատվությունները։
- **Համադրում**- սովորողը կարող է օգտագործել տարբեր աղբյուրներից ստացած գիտելիքները կամ տեղեկատվությունը։
- **Արժեվորում**- սովորողը կարող է գնահատել գիտելիքը կամ տեղեկատվությունը՝ կատարելով դատողություններ և եզրահանգումներ։

2. Թեստերի տեսակները

Թեստը պետք է ունենա հստակ հատկորոշիչներ. Դրանք կազմվում են հարցարանի տեսական հենքը և տեղեկություն են տալիս հետևյալ հարցերի վերաբերյալ.

- ո՞ր դասարանի համար է նախատեսված.
- ի՞նչ նպատակ է հետապնդում, որ թեմաներից են ստուգվում սովորողի գիտելիքներն ու հմտությունները.
- առաջադրանքների քանակը
- թեստերի գնահատման առավելագույն միավորը.
- հատկացված ժամանակը
- գնահատման չափանիշների միվորային աղյուսակ, որտեղ տրվում է յուրաքանչյուր առաջադրանքի համար, այդ առաջադրանքի առավելագույն միավորը և դրա գնահատման յուրաքանչյուր քայլի միավորը։

Կախված նպատակից կիրառվում են տարբեր տեսակի թեստեր, որոնք կարող են լինել տարբեր բովանդակությամբ, կառուցվածքով, գնահատման ձևով։

Կիրառվում են թեստերի հետևյալ տեսակները։

- ընդհանուր գիտելիքների ստուգում։
- հայտորոշիչ
- ամփոփիչ
- տեղակայման թեստեր

ԸՆդհանուր գիտելիքների ստուգման թեստը տրվում է սովորողների ծրագրային նյութի յուրացման մակարդակը ճշտելու և ստուգելու նպատակով։ Այսպիսի թեստեր են դպրոցի պետական սովորական և ընդունելության քննությունների թեստերը, տարական դպրոցի 4-րդ դասարանի գիտելիքների ստուգման թեստերը և այլն։ Այս թեստերը կազմվում են ոչ թե դպրոցի այլ մեկ ուրիշ կազմակերպության կողմից։ Հայտորոշիչ թեստը հիմնականում նպատակ ունի խթանելու և օգնելու սովորողին բարելավելու իր առաջադիմությունը։ Դրանք հնարավորություն են տալիս պարզել ինչպես յուրաքանչյուր սովորողի, այնպես էլ ամբողջ դասարանի ձեռքերումներն ու բացթողումները՝ ուսումնական գործնթացում ապահովելով հետադարձ կապ և բարելավել ուսուցումը։

Ուսուցանողը նպատակով կարելի է օգտագործել կարճ ժամանակի համար նախատեսված հայտորոշիչ թեստեր, որոնց արդյունքները միավորներով չեն գնահատվում։ Դրանց իրական նպատակը ուսումնասիրած թեմայից կամ թեմայի մի մասից սովորողների ոչ թե միավորային գնահատումն է, այլ յուրաքանչյուր սովորողի կողմից նյութի յուրացման աստիճանի պարզումը, նյութը վատ յուրացրած կամ չյուրացրած սովորողների բացահայտումը՝ նրանց գիտելիքների կարողությունների ու հմտությունների մասին տեղեկություն ստանալն էլ որը հնարավորություն կտա ժամանակին կատարել անհրաժեշտ շտկումները և բարելավել նրանց ուսուցումը, նպաստել նրանց առաջնդացին։ Այն պետք է նաև ուսուցչին, որպեսզի բացահայտի բացթողումները և կարողանա ճիշտ պլանավորել իր հետագա աշխատանքը։

Կարճ ժամանակով նախատեսվող հայտորոշիչ թեստերն ավելի օգնում են, և դրանց արդյունքներն ավելի օբյեկտիվ, հուսալի և արդար են վերլուծությունների համար։ Նման թեստերում ընդգրկվող առաջադրանքների հարցերը լինում են հիմնականում հետևյալ տեսակների՝

- ընտրովի պատասխանով
- կարճ պատասխանով
- համապատասխանեցման
- բաց թողած լրացնելու հարցերով

2.1 Հայտորոշիչ թեստ

Հայտորոշիչ թեստը տրվում է յուրաքանչյուր սովորողի կողմից տվյալ դասնթացի յուրացման աստիճանը պարզելու և նրա հետ հետադարձ կապի հաստատման նպատակով: Գրավոր կամ բանավոր արժեվորման ժամանակ կարևորում են ուսուցչի հետևությունները, մեկնաբանությունները: Աշխատանքը վերլուծելիս անհրաժեշտ է յուրաքանչյուր սովորողի ներկայացվի նյութի յուրացման իր մակարդակը, նկատվում բացթողումները:Այդ վերլուծությունները և մեկնաբանությունները պետք է այնպես արվեն, որ օգնեն սովորողին բարելավելու իր արդյունքները ուսուցչի, սովորողի կամ ընկերների կողմից տանել համապատասխան աշխատանքը նկատված թերությունները շտկելու, ուսուցումը խթանելու համար:

Ներկայացնեմ «անգլերեն»առարկայից հայտորոշիչ թեստի նմուշօրինակներ.

ENGLISH DIAGNOSTIC TEST

Please answer the following questions without spending too long considering your answers. The test multiple choice based and is there for diagnostic purposes to assess your present language needs. Good luck! Please choose the answer you think fits best into the gaps and enter your choice on the multiple choice answer paper provided. Indicate your answers on the
answer paper provided.

1 He's ……doctor of law.
A an B the C a D one

2 …..she like chocolates?
A Does B Has C Is D Do

3 The student …… papers.
A writing B writes C write D is writes
A What B Who's C Whose D Which

5 …..tell her professor next time.
A She does B She C She'll D She's

6 He ….to see his mother yesterday.
A went B goes C has gone D has been

7 He….very hard now.
A works B has been working C is working D work

8 They have….. beautiful books.
A any B all C some D lots

9 She …….for fifteen years and still likes the job.
A works B is working C has been working D worked

10 …….up! or we'll be late.
A You hurry B Be hurrying C Hurry D Hurry you

Հայտորոշիչ թեստն ունի հետևյալ առանձնահատկությունները.

- կիրառվում է ուսումնառության ընթացքում
- կարճ ժամանակի համար նախատեսված՝ 15-20 րոպե
- ստուգում է մեկ հիմնական գիտելիք կամ ունակություն
- բոլոր առաջադրանքներն ուղղված են նույն գիտելիքների, կարողության կամ հմտության ստուգմանը
- առաջադրանքների տեսակները լինում են տվյալ թեմայի ուսուցման նպատակից
- հարցերը ձևավորվում են կարճ, պարզ, մատչելի
- առաջադրանքները ունեն միջին բարդության աստիճան

- արդյունքները արագ ստուգվում և արժևորվում են
- արդյունքները թույլ են տալիս մեկնաբանել սովորողի առաջադիմության աստիճանն ու կարիքները
- արդյունքների վերլուծությունից, մեկնաբանությունից հետևում է օժանդակության ըստ անհրաժեշտության։

2.2 Ամփոփիչ թեստ

Ամփոփիչ թեստը հիմնականում ստուգողական բնույթի է։ Ստուգումը կարող է իրականացվել տարբեր նպատակներով։ Ամփոփիչ թեստի հիմնական նպատակը ամբողջական թեմայի կամ կիսամյակի ընթացքում անցած ծրագրային նյութի յուրացման մակարդակի ստուգումն ու ամփոփումն է առարկայական չափորոշչի և ծրագրի պահանջներին համապատասխան։

Ամփոփիչ թեստերը անցկացվում են, որևէ կոնկրետ թեմա, ենթաթեմա կամ մի քանի թոքր թեմաներ ստուգելու և ամփոփելու նպատակով, որն իր մեջ պետք է ընդգրկի այդ թեմայի կարևոր առանձքային հարցերը։

- Կիսամյակը ամփոփելու նպատակով, որը տրվում է կիսամյակի վերջում բացահայտելու կիսամյակի ընթացքում ուսումնասիրած ծրագրային ամբողջ նյութի յուրացման աստիճանը.
- Տնօրինության կողմից վերահսկողություն ապահովելու նպատակով։

Ամփոփիչ թեստի առանձնահատկություններն են.

- Տրվում է ուսուցման փուլի վերջում
- Ստուգում և գնահատում ավելի խորը գիտելիքներ և հմտություններ
- Հարցերը ձևակերպվում են պարզ և մատչելի
- Հատկորոշիչները սահմանված են շատ հստակ
- Յուրաքանչյուր առաջադրանք գնահատվում է մյուսներից անկախ
- Առաջադրանքները տրված են պարզից դեպի բարդ սկզբունքով
- Առաջադրանքների տեսակները բազմազան են
- Կատարմանը հատկացված է ավելի շատ ժամանակ

- Այն հուսալի է, հավաստի, արդյունավետ և օբյեկտիվ:

Ամփոփիչ թեստը կարող է պարունակել թե՝ բազմակից ընտրությամբ, թե՝ կարճ պատասխան, թե՝ ընդարձակ կամ ստեղծագործականն պատասխաններ պահանջող հարցեր: Թեստի յուրաքանչյուր առաջադրանքի կատարման համար տրվում է առանձին միավոր, նշվում է գնահատման քայլը: Յուրաքանչյուր առաջադրանք գնահատվում է մյուսներից անկախ: Թեստի առաջադրանքների կատարման համար տրվող գումարային առավելագույն միավորը կարող է տարբեր լինել 10 միավորից: Այդ դեպքում գումարային միավորը պետք է բերել 10 միավորային համակարգի :

Ամփոփիչ թեստի նմուշօրինակ հատկորոշիչներ.

Task 1. Translate the sentences form Armenian into English. (1/0.2)

1.Այս գարուն ծաղիկները ուշ ծաղկեցին:

2.Նա գերազանց գնահատականներ ստացավ իր աշխատասիրության շնորհիվ:

3.Դու մի քանի սխալ ունեիր, բայց ընդհանուր առմամբ վատ չէր:

4.Հաղորդկացման ժամանակակից միջոցներն աշխարհն ավեի փոքր են դարձնում:

5.Հմուտ ճանապարհորդը գերադասում է մի վայր գնալ:

Task 2. Find the odd word. (2/0.4)

1. Though an owl has large eyes, but it does not see well in the daytime.

2. No sooner had we reached to the station than the train arrived.

3. The students thanked to the professor for such an interesting report.

4. In terms of statistics, Belfast is the most safest city in the United Kingdom.

5. As I came nearer, I noticed the woman to talk to the policeman.

Task 3. Fill in the correct prepositions. about – at – by - for – from – in – of – on – to - with (2/0.4)

1.What are you talking _____?

2. _____ the end of next year we will have made over £ 100,000.

3. She always gets up early _____ the morning and goes to bed late _____ night.

4. I went to work _____ Tuesday but I didn't go on Friday morning.

5. You'll have to wait. He'll be with you _____ a minute.

Task 4. Put right tense form. (2/0.4)

1.I (not to see) the exhibition yet: it (to open) on Sunday.

2.George (to be) in Moscow for about two weeks.

3.The travelers (to reach) the village when it (to begin) to rain.

4.The mother (to cook) dinner and (to wait) for the children.

5.He was very confused and (not to know) what she (to talk) about

Task 5. Transform the sentences correctly. (1/0.2)

1. The woman said to her son, "I am glad I am here."

2. Mike said, "We have bought these books today."

3. She said to me, "Now I can read your translation."

4. "This man spoke to me on the road," said the woman.

5. "I can't explain this rule to you," said my classmate to me.

Task 6. Change the form of words in capitals. (2/0.4)

1. Armenia is a small __ country with no seas and good land. (MOUNTAIN)

2. Armenia had a long and __ history, surviving through many dramatic days. (EVENT)

3. __ Armenian industry is built on manufacturing, mining, chemical industry and metallurgy. (TRADITION)

4. Every five years general presidential and __ elections are held. (PARLIAMENT)

5. It was a time of national __ . (PROSPER)

Ցանկացած թեստ պետք է նպաստի սովորողի ուսուցման բարելավմանը և առաջընթացին։Թեստերըէ որպես չափման գործիք լավագույնս կծառայեն նպատակին, եթե կազմվեն նպատակային առարկայական չափորոշչի և ծրագրային նյութին համապատասխան, անցնեն փորձաքննություն, հաշվի առնվեն թեստ կազմելու պահանջները և միջազգային փորձը։

Եզրակացություն

Որպես եզրակացություն կարող ենք նշել, որ (տարբեր տեսակների) թեստերը ծառայում են տարբեր նպատակների համար։ Դրանք շատ օգտակար են ուսուցիչների և աշակերտների համար։ Թեստերը շատ արդյունավետ են այն հատկապես լեզուների ուսուցման ընդացքում։ Դրանք օգնում են ուսուցչին բացահայտել աշակերտի ուժը և թույլ կողմերը, ուսուցչին պարզ է դառնում, թե հատկապես, որ ուղղությամբ աշխատի, ինչ մեթոդներ կիրառի աշխատանքը բարելավելու համար։ Թեստերը կարող են նաև հանդես գալ որպես մոտիվացնող գործիք։ Այնուամենայնիվ թեստերի չափից շատ կիրառումը կարող է ունենալ իր վատ ազդեցությունը։ Դրանք պետք է լինեն չափավոր և նպատակային։

Գոյություն ունեն թեստերի չորս ավանդական կատեգորիաններ կամ տեսակներ։

1. Իմացության թեստեր, որոնք չափում են թե որքան է աշակերտի ունեցած գիտելիքները, որը նա գիտի, կամ սովորել է այդ ընթացքում։
2. Ձեռքբերումների տեստեր, որոնք չափում են աշակերտի գիտելիքները որոնք նա ձեռք է բերել որոշակի դասնթացի, ուսման կամ ծրագրի ընդացքում։
3. Ախտորոշիչ թեստեր, որոնք ցույց են տալիս աշակերտի ունեցած գիտելիքները կամ դրանց բացակայությունը։
4. Տեղակայման թեստեր, որոնք օգնեում են աշակերտներին դնել համապատասխան մակարդակի վրա։

Ժամանակակից կրթության մեջ թեստերի դերը կարևոր է աշակերտների և ուսուցիչների համար։

Գրականության ցանկ

1. http://tert.nla.am/archive/NLA%20AMSAGIR/Matematikan%20dprocum/2013%282%29.pdf
2. Heaton, J. 1990. Classroom Testing. Longman
3. Hicks, D. Littlejohn, A. 1998. Cambridge English for Schools (CES). Teacher's Book. Level Two. Cambridge University Press.